«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-263-30.08.2019-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել՝

1) որ ընկերության ընդհանուր ժողովն իրավասու է որպես ընկերության անդամներին տրամադրվող արտոնություն՝ նվազեցնելու ջրօգտագործման դիմաց վճարման ենթակա վճարները (նախագծի 1-ին հոդված).

2) ջրօգտագործողների ընկերության և ջրօգտագործողների միության գործադիր տնօրեններին ներկայացվող պահանջներ (նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ):

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծի 1-ին հոդվածը հանել, քանի որ ջրօգտագործման դիմաց վճարների նվազեցումը՝ որպես ջրօգտագործողներին տրվող արտոնության տեսակ, օրենսդրորեն առանձնացնելու անհրաժեշտությունը բավարար հիմնավորված չէ: Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ առաջարկվող արտոնության տրամադրման արդյունքում կարող են նվազել ջրօգտագործողների ընկերությունների հասույթները, իսկ ջրօգտագործողների ընկերություններին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվում են սուբսիդիաներ՝ ֆինանսական ճեղքվածքի ծածկման համար: